



ՇԱՐՔԱՐՔԱՐՔԵՐԻՔ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Բնորոշելություն ռստիկանությունում

Օգոստոսի 13-ին ռստիկանության պետ, ռստիկանության գեներալ-մայոր Վալերիյ Օսիպյանն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Չինաստանի ժողովրդական շանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Թիան Էրլունին:



Վալերիյ Օսիպյանը կարեւորեց հայ-չինական սերտ հարաբերությունները, որի շրջանակում ակտիվ համագործակցություն կա երկու երկրների իրավապահ կառույցների միջև: Նա խոսեց ռստիկանության համակարգում տեղի ունեցող բարեփոխումների մասին:

Կողմերը բննարկեցին Նոր ստեղծվելիք օպերատիվ կառավարման կենտրոնի տեխնիկական հագեցվածությանը վերաբերող հարցեր:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ Թիան Էրլունը նշեց, որ ավելացել է Հայաս-



տան մեկնող չինացի զբոսաշրջիկների թիվը: Նրանց անվտանգ հանգիստն ապահովում են հայ ռստիկանները, որոնց ծառայությունը չափա-

զանց կարեւոր և գնահատելի է:

Հանդիպմանը Թիան Էրլունը ներկայացրեց դեսպանության Նորանշակ ռազմական կցորդին:

Վալերիյ Օսիպյանը շնորհավորեց ռազմական կցորդին՝ պատասխանատու պաշտոնի նշանակվելու կապակցությամբ ու մաղթեց բարի և արդյունավետ ծառայություն:

Ռստիկանության պետը ջերմ բարեմաղթանքներ ու շնորհակալական խոսքեր փոխանցեց Չինաստանի ժողովրդական շանրապետության դեսպանության Նախորդ ռազմական կցորդին, որն ավարտել է ծառայությունը Հայաստանում: Վալերիյ Օսիպյանի հրամանով նա պարգևատրվել է «Համագործակցության ամրապնդման համար» մեդալով, որը հանձնվեց դեսպանին:

Հանդիպմանը բննարկվեցին փոխադարձ հետաքրքրություններ կապակցում այլ հարցեր եւս:

Յուրացում Մրգաշենում

Ռստիկանության ԿՀԳՊ գլխավոր վարչությունում ստացված օպերատիվ տեղեկությունների հիման վրա, Կոտայքի մարզային վարչության և Նախրիի բաժնի քրեական հետախույզների հետ համատեղ միջոցառումների արդյունքում, խոշոր չափերի յուրացման կամ վատնման առերեսությամբ հանցագործության դեպք է բացահայտվել:



Օպերատիվ-հետախույզական միջոցառումների արդյունքում իրավապահները պարզել են, որ Մրգաշեն համայնքի նախկին ղեկավարը, ըստ քննությանը ձեռք բերված նախնական տվյալների, չարաշահելով պաշտոնական դիրքը, համայնքապետարանում հրամանագրել է տարբեր անձանց, որոնք աշխատանքի չեն ներկայացել, սակայն նրանց անվամբ դուրս գրված աշխատավարձը՝ մոտ 12 միլիոն 600 հազար դրամ, յուրացվել է:

Հարուցվել է քրեական գործ:

Դրամանենկությունը բացահայտվեց

Օրերս ռստիկանության քրեական հետախույզության գլխավոր վարչության ծառայողները օպերատիվ միջոցառումների շնորհիվ տեղեկություններ ստացան, որ Սեւանի թերակղզու ռեստորանային համալիրներից մեկում 500 եվրո անվանական արժեքով կեղծ թղթադրամ է իրացվել:



ԿՀԳՊ գլխավոր վարչության քրեական հետախույզները, համագործակցելով ռստիկանության Սեւանի բաժնի ծառայողների հետ, պարզեցին դեպքի մի շարք հանգամանքներ: Հայտնաբերվեցին ու բերման ենթարկվեցին անձինք: Բերման ենթարկվածներից մեկի բնակարանում հայտնաբերվեցին մարիխուանա, ատրճանակ:

Մեկ անձ կալանավորվել է: Օպերատիվ-հետախույզական միջոցառումներն ու քննչական գործողությունները շարունակվում են:

Երկու քաղաքացու էր դանակահարել

Օգոստոսի 9-ին ռստիկանություն զանգած քաղաքացին հայտնում էր, որ ինքը դանակահարված է և գտնվում է «Հաղթանակ» կամրջի մոտակայքում:



Սիտուացիան շտապ արձագանքած ռստիկանության պարեկապահակետային ծառայության գնդի ռստիկանները նշված վայրից հիվանդանոց տեղափոխեցին դանակահարված երկու քաղաքացու:

Քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների արդյունքում պարզվեց, որ Ռստիկանության փողոցում տեղի ունեցած վիճարկության ժամանակ 45-ամյա մի քաղաքացի դանակով հարվածներ էր հասցրել տղամարդկանց՝ պատճառելով վնասվածքներ: Նա բերման ենթարկվեց ռստիկանություն, սվեց խոստովանական բացատրություն: Նրա մոտից հայտնաբերվեց հանցագործության գործիք դանակը:

Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ:

Կանխարգելիչ միջոցառումներ մարզերում

Այսօր, առավել քան երբեք, քաղաքացին պահանջում է, որ իրեն արհեստավարժ և արդյունավետ ռստիկանական ծառայություն մատուցվի, ինչին լիարժեք կարելի է հասնել միայն ռստիկանության ու համայնքի միջև համագործակցության շնորհիվ:



Այդ իսկ նպատակով օպերատիվ իրավիճակը վերահսկելու, սպասարկվող տեղանասի բնակչությանը հանցավոր ոտնձգություններից զերծ պահելու համար, ռստիկանության պետ, ռստիկանության գեներալ-մայոր Վալերիյ Օսիպյանի հանձնարարականի համաձայն, ռստիկանության տարածքային ստորաբաժանումների ծառայողները իրականացնում են բակային հան-

դիպումներ բնակիչների հետ:

Ռստիկանության տարածքային ստորաբաժանումների ծառայողները կազմակերպում են իրավախախտումների նախկանման, հանցագործների հայտնաբերման ուղղությամբ ծավալում միջոցառումներ, իսկ գրույց-հանդիպումների միջոցով աշխատում են բարձրացնել հասարակության իրավագիտակցությունը: Իրավապահները ուսումնասիրում և վերլուծում են սպասարկվող տարածքի օպերատիվ իրավիճակը, իրավախախտումների տեսակը, դրանք ծնող պատճառներն ու պայմանները և դրանց հիման վրա կազմում աշխատանքային պլաններ:

Էջ 2


Համայնքի ղեկավարի ապօրինությունները





Ծառայողները օպերատիվ տվյալներ էին ստացել, որ Արարատի մարզի Արաքսավան համայնքի ղեկավարը պաշտոնավարման տարիներին թույլ է տվել չարաշահումներ:

Տեղեկությունների հիման վրա ձեռնարկված օպերատիվ-հետախույզական միջոցառումների շնորհիվ փաստական տվյալներ են ձեռք բերել, որ համայնքի ղեկավարը 2005 թվականից, տարբեր ժամանակահատվածներում, համայնքապետարանում հավաքարար է հրամանագրել իր մտերիմներին, որոնք փաստացի աշխատանքի չեն ներկայացել, իսկ հավաքարարի պարտականությունները նրանց փոխարեն փաստացի կատարել է մի կին ստանալով ընդհանուր 2 միլիոն 892 հազար դրամից ավելի գումար: Մինչդեռ նշված ժամանակահատվածում համայնքի ֆինանսական միջոցներից դուրս է գրվել 6 միլիոն 115 հազար դրամից ավելի գումար, որից 3 միլիոն 223 հազար դրամը յուրացվել է:

Դեպքի առթիվ քրեական գործ է հարուցվել:

«խոշոր շահում»

Ռստիկանությունում փորձում էին համոզել իբր երիտասարդը կամովի էր տվել ոսկյա շղթան ու հեռախոսը:
Էջ 3

Ամերիկյան տարօրինակ օրենքներ

ԱՄՆ-ում թեև տարօրինակ օրենքների մեծ մասը հնացել է, բայց պաշտոնապես մնում է ուժի մեջ:
Էջ 5

Հին «արհեստի» ուժը

Մառախուլ կատարող պարեկայինները ճիշտ պահին ճիշտ տեղում էին և արագ արձագանքեցին:
Էջ 7

Main horoscope table with columns for zodiac signs, planets, and various astrological indicators. Includes a large image of a mechanical press on the left side.

Կեսի - Հավանական են հետաքրքրաշարժ արկածներ: Հաճախ ինքներդ ամեն ինչ անում եք առաջ գնալու եւ կյանքը փոխելու համար:

Աստղագիտական 16.08 - 22.08

Առյուծ - Հետաձգեք կարեւոր հարցերի բնարկումները: Ցավոք, ընտանեկան հարաբերությունները լարված են:

Աղեղնավոր - Անձնական կյանքում էական փոփոխություններ չեն սպասում: Ենթոյնալ ֆոնը բարենպաստ է:

Փորձեք լուծել

Chess puzzles for two players (խնդիր N1 and N2) with board diagrams and piece positions.

Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից... Նախորդ խնդիրների պատասխանները

Նախորդ համարի սկզբնական պատասխանները (Answers to previous issues) with a grid and a portrait of a man.

«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աբաբեկյան: Գրանցման վկայական 27312002739: Տրվել է 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության 15.08.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950: Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հեռակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը՝ «02»-ին պարտադիր է: Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուները պատվիրատուներն են: